Ի. Ալիևը և Ռ. Էրդողանը խորացնում են դաշինքը Պակիստանի հետ

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 12.04.2025 թ.[1]

Ադրբեջանական և պակիստանյան ՁԼՄ-ների տեղեկությունների համաձայն՝ Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևն այս ամիս պաշտոնական այցով կմեկնի Պակիստան: Պակիստանի *Business Recorder* անգլալեզու պարբերականի տվյալներով՝ այցի ընթացքում երկու երկրների միջև կստորագրվեն կապի, էներգետիկայի և պաշտպանության ոլորտներին վերաբերող ռազմավարական բնույթի մի շարք համաձայնագրեր: Մասնավորապես, խոսքը հիմնականում վերաբերում է Ադրբեջանի կողմից Պակիստանին երկու վարկային փաթեթների հատկացմանը՝ Սուկկուր–Հայդարաբադ (M-6) և Հայդարաբադ–Կարաչի (M-9) մայրուղիների կառուցման համար: Ընդհանուր առմամբ 2 մլրդ դոլար գնահատվող վարկային պայմանագիրը կստորագրվի Ի. Ալիևի ներկայությամբ: Բացի այդ, հնարավոր է, որ նրա մասնակցությամբ պայմանագիր կնքվի նաև Ադրբեջանին պակիստանյան *JF-17 Block 3* կործանիչների մատակարարման համար: Ենթադրվում է, որ կողմերն ամենաբարձր մակարդակով կքննարկեն տրանսպորտի, էներգետիկայի, արդյունաբերական զարգացման և պաշտպանական արդյունաբերության ոլորտներում համագործակցության խորացման հարցեր:

Ադրբեջան–Պակիստան ռազմավարական հարաբերությունների խորացումը Թուրքիա–Պակիստան ավելի մեծ դաշինքի ստեղծման տրամաբանությունից բխող կանխատեսելի միտում էր, ինչն իր հերթին ձևավորվել էր ասիական տարածաշրջանում գլոբալ փոփոխությունների ազդեցության ներքո: Իսլամաբադի՝ Անկարայի հետ դաշինք կնքելու ցանկությունը բացատրվում է Պակիստանի կողմից իր ավանդական դաշնակիցների նախկին աջակցության կորստով: Վերջին տասնամյակի ընթացքում Պակիստանը դուրս է մնացել ԱՄՆ-ի ուշադրությունից, որը ժամանակին կայուն կերպով պահպանում էր զգալի հանքային պաշարներ կամ արդյունաբերական բազա չունեցող իսլամական երկրի ֆինանսատնտեսական հավասարակշռությունը: Դ. Թրամփի իշխանության վերադառնալուց հետո ԱՄՆ-ի՝ Պակիստանի ֆինանսատնտեսական խնդիրներից դուրսգալու միտումն էլ ավելի կուժեղանա՝ հաշվի առնելով, որ Վաշինգտոնի նոր վարչակազմը մտադիր է վերանայել նույնիսկ իր ամենամերձավոր դաշնակիցներին ցուցաբերվող աջակցության չափը: Մյուս կողմից, Չինաստանի հետաքրքրությունը Պակիստանի ֆինանսատնտեսական կայունության և Հարավային Ասիայում նրա ռազմական ու քաղաքական դերի նկատմամբ նույնպես նվազել է: Հնդկաստանա-չինական հարաբերությունների կարգավորման դիտարկվող գործընթացը նպաստել է Պեկինի հետաքրքրության նկատելի նվազմանն Իսլամաբադի՝ որպես բնական դաշնակցի, նկատմամբ, որը զսպում է Նյու Դելիի ռազմական և քաղաքական

[1] Նյութի բնօրինակը (ռուս.) հրապարակվել է մեր կայքէջում 09.04.2025 թ.:

կշիռը: Ներկայիս աշխարհաքաղաքական իրողություններում Պակիստանը մշտապես բախվում է մարտահրավերների՝ սպառազինությունների մրցավազքում անհրաժեշտ հուսալի աջակցության բացակայության և Հնդկաստանի հետ քաղաքական ու տնտեսական մրցակցության պատճառով: Վերջին տարիներին Հնդկաստանի տնտեսության բեկումնային զարգացումը Նյու Դելիին ճնշող առավելություն է տվել բարձր տեխնոլոգիաների, պաշտպանական արդյունաբերության, բանակային շինարարության և Իսլամաբադի հետ լայնածավալ հակամարտության դեպքում դիմադրողականության ընդհանուր պաշարի ամրապնդման ոլորտներում: Այսօր Պակիստանը բոլոր առումներով զիջում է Հնդկաստանին, իսկ ծայրահեղ թույլ տնտեսությունը՝ զուգորդված երկրում տարեցտարի վատթարացող սոցիալական վիճակի հետ, հանգեցնում է Պակիստանի քաղաքական համակարգի մշտական ապակայունացմանն ու խաթարմանը: Նման պայմաններում երկիրն ստիպված է որոնել նոր գործընկերներ և ռազմավարական դաշնակիցներ՝ Հնդկաստանի հետ աշխարհաքաղաքական մրցակցության մեջ ուժերի հավասարակշռությունը պահպանելու համար: Թուրք-ադրբեջանական երկյակի հետ դաշինքը, եթե ոչ ամբողջովին, ապա զգալի չափով կարող է փոխհատուցել Իսլամաբադի կողմից ԱՄՆ-ի և ՉԺՀ-ի նախկին ուշադրության և աջակցության կորուստը: Ավելին, Անկարան և Բաքուն մեծ ազդեցություն ունեն տարածաշրջանում, ինչը կարող է բարդացնել Նյու Դելիի ծրագրերը՝ կառուցելու «Հյուսիս–Հարավ» համաշխարհային առևտրային և լոգիստիկ երթուղին, որը շրջանցում է Պակիստանը և նրա հաղորդակցությունները:

Ինչ վերաբերում է Պակիստանի հետ սերտ մերձեցման հարցում Թուրքիայի հետաքրքրությանը, ապա այն հիմնականում բխում է Կենտրոնական Ասիայի թյուրքական հանրապետություններում նրա ծավալապաշտական քաղաքականության համար հուսալի թիկունք ապահովելու և երկարաժամկետ հեռանկարում Անկարայի համար Իսլամաբադի՝ ՆԱՏՕ-ի ուղղությամբ փակ ռազմական տեխնոլոգիաներին հասանելիություն ստանալու ակնկալիքից: Կարելի է ենթադրել, որ խոսքը հիմնականում Պակիստանի միջուկային տեխնոլոգիաների և զինանոցի մասին է, որոնց «հասանելիությունն» այս կամ այն չափով կարող է նպաստել Թուրքիայի՝ Եվրասիայում իր աշխարհաքաղաքական կշիռը մեծացնելու հավակնություններին: Թուրքիայի համար «միջուկային տերության» կարգավիճակը ֆորմալ առումով անհասանելի է, բայց, դատելով այդ երկրում տիրող տրամադրություններից, Անկարան դեմ չէր լինի այդ ոլորտում աշխատել Պակիստանի հետ, ինչը նման է ԱՄՆ–Իսրայել համագործակցության տրամաբանությանը, որի արդյունքում Իսրայելը տասնամյակներ առաջ միջուկային զինանոց ձեռք բերեց՝ առանց հրեական պետության կողմից միջուկային կարգավիճակ ստանալու հայտի: Այս լույսի ներքո առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Թուրքիայի միջին և մեծ հեռահարության բալիստիկ հրթիռների մշակման լայնածավալ

ծրագիրը, քանի որ այն Անկարայի համար հազիվ թե իմաստ ունենար առանց դրանց վրա բարձր հզորության մարտագլխիկներ տեղադրելու հեռանկարի: Պակիստանն ինքն այդպիսի հրթիռների կամ դրանց ստեղծման առաջադեմ տեխնոլոգիաներ չունի, իսկ նրա միջուկային զինանոցը գրեթե ամբողջությամբ բաղկացած է օդային տեղակայման մարտավարական մարտագլխիկներից: Տրամաբանական է ենթադրել, որ պաշտպանական համագործակցության ոլորտում Թուրքիայի և Պակիստանի ռազմավարական մերձեցումը կարող է ենթադրել համագործակցություն՝ առնվազն համատեղ «միջուկային հովանոցի» ստեղծման և զարգացման ուղղությամբ:

Ըստ երևույթին, Ադրբեջանի հարաճուն ակտիվությունը պակիստանյան ուղու վրա անհրաժեշտ է դիտարկել թուրք-պակիստանյան դաշինքի ամրապնդման համատեքստում: Բաքուն կրկնօրինակում և աջակցում է իր ավագ գործընկերոջ քաղաքականությունը՝ հիմնականում Իսլամաբադին հատկացնելով ֆինանսական և տնտեսական օգնություն, ինչը տնտեսական անկումից տառապող Թուրքիան վերջին տարիներին չի կարողացել տրամադրել: Ենթակառուցվածքային նախագծերի, կասպյան նավթի մատակարարումների և ադրբեջանական բանակի համար պակիստանյան մարտական ինքնաթիռների գնման վարկերը, որոնք աշխարհում ամենաառաջադեմն ու ամենաորակյալը չեն, կարող են նկատելի շարժ չբերել Պակիստանի լճացած տնտեսությանը, բայց դրանք կապահովեն պակիստանյան վերնախավերի և հասարակության համակրանքի աճը թուրք-ադրբեջանական երկյակի նկատմամբ և հող կպատրաստեն հետագա համագործակցության ավելի «համարձակ» ձևերի համար, օրինակ, ինչպես վերը նշվեց, ռազմական միջուկային տեխնոլոգիաների ոլորտում:

Եռակողմ հարաբերությունների հետագա խորացման համար կան բոլոր նախադրյալները: Ադրբեջանա-պակիստանյան հարաբերություններն իրենք իսկ հիմնված են վերջին տասնամյակների ամուր հիմքի վրա: Պակիստանը մինչ օրս մնում է ՄԱԿ-ի անդամ միակ պետությունը, որը չի ճանաչել Հայաստանի Հանրապետության անկախությունն ու ինքնիշխանությունը: Իսլամաբադը Ղարաբաղյան հիմնախնդրի լուծման հարցում անցյալ դարի 90-ականների սկզբից ի վեր միջազգային ատյաններում հետևողականորեն հանդես է գալիս բացառապես Բաքվի դիրքերից: 2020 թ., ինչպես կարելի է դատել բաց աղբյուրներից, պակիստանյան բանակի հատուկ ջոկատայիններն անմիջականորեն մասնակցել են Արցախի Հանրապետության դեմ Ադրբեջանի սանձազերծած լայնածավալ ագրեսիային: Այս իրողությունները կողմերի համար ամուր հիմքեր են դրել՝ հարաբերությունների ավելի բարձր մակարդակի հասնելու համար: Այս առումով, Ի. Ալիևի այցը միանգամայն տրամաբանական է և անակնկալի որևէ տարր չի պարունակում, ինչպես որ, ի դեպ, Ռ. Թ. Էրդողանի նմանատիպ այցն Իսլամաբադ 12.02.2025 թ.: Ավելի շուտ, երկու այցերն էլ արձանագրում են Եվրասիայում նոր դաշինքի ստեղծման երկարամյա գործընթացները, ինչի նպատակն է ոչ հեռու ապագայում մրցակցել ավանդական աշխարհաքաղաքական ուժային կենտրոնների և դերակատարների հետ: